



ԱՐԱՐՈՒՆ ՏԱՅՏԱՆ

Ֆրանսի, Փրոսիեր Մերիմեի կարեւոր երկերը: Երեւանեան մամուլին մէջ ըստորագրած է նաեւ գրական եւ գրախօսական յօդուածներ: 1944 թուականէն աստիճանաբար է Հայաստանի Գրողներու Միութեան:

Այժմ, երկար տարիներ վերստին աշխատելէ ետք, հիմնովին վերամշակած է «Աստուածային Կատակերգութեան» իր նախկին թարգմանութիւնները, եւ կազմեր է նոր մեկնութիւններ, Տանթէի տալիան նորագոյն տուեալներու ուսումնասիրութեամբ: 1966 թուին, Տանթէի ծննդեան 700ամեայ յորելեանի առիթով, առաջին անգամ ըլլալով հայ իրականու-

թեան մէջ, պիտի հրատարակուի «Աստուածային Կատակերգութեան» լրիւ չափածոյ թարգմանութիւնը՝ Հայաստանի պետական հրատարակչական մարմիններու կողմէ*:

Արրուն Տայեան, իր մանկութեան օրերուն, վաղեւած է խաւական պայծառ կապոյտին հողեպարար թովչանքը. անտարակոյս, Մուրատ-Ռափայէլեանի աշակերտութեան շրջանէն, մեծանուն թարգմանիչ՝ Ղազիկեանի շունչով խանդավառ, սիրահարուած է Տանթէին եւ անոր անմահ դործին: Տարիներու ընթացքին, խաւերէն լեզուի իր հմտութեան կողքին, խորացած է Տանթէի պատկան պրպտումներու մէջ եւ իւրացուցած է բազմահատոր մեկնութիւններ, մասնագիտական ուսումնասիրութիւններ, եւրոպական լեզուներով. համբերատար ու յարատեւ աշխատանքով՝ անիկա ներկայիս մեր արժէքաւոր Տանթէագէտն է: Տանթէի համընթաց, թարգմանական երկարամեայ փորձառութեամբ, աճած ու խորունկացած է նաեւ իր հայերէնագիտութիւնը, եւ այդպէս դարձած է Տանթէի վարպետ ու վաստակաւոր թարգմանիչ:

Ստորեւ, մեր ընթերցողներուն զաղափար մը տալու համար կատարուած զնահատելի աշխատանքին մասին, սիրով կը հրատարակենք «Կատակերգութեան» երեք մասերուն առաջին երկերը՝ Արրուն Տայեանի վերամշակուած թարգմանութեամբ:

ԽՄԲ.

*) Այս մանրամասն տեղեկութիւնները ուղղակի թարգմանիչէն քաղած է Հ. Ներսէս Վրդ. Տէր-Ներսէսեան, Երեւանի մէջ, Արրուն Տայեանի հետ ուրախալի հանդիպումի մը առիթով, 1965 թուականի Նոյեմբեր 12ին:

ՏԱՆԹԵԱԿԱՆ ԷՋԵՐ

Դ Ժ Ո Ւ Ք

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Մըին անտառում: – Ելքը անտառից: – Փրկութեան լեռը եւ երեք գազանները:
Ապառիտ առաջնորդ Վիրգիլիոսը: – Անտառը ցանապարհորդութեան սկիզբը:

Կիսաճամբին մեր այս կեանքի մարդկային
Ես կորցրելի ճանապարհը ճշմարիտ
Եւ ինձ գրտայ մի անտառում մը թագին:

Օ՛, դըժուար է արտայայտել թէ ո՛րքան
Վայրի, դժնի ու մըռայլ էր անտառն այդ.
Յիշելով այն ես սոսկում եմ դեռ այնքան:

Նա դառնաշունչ ու ահեղ էր մահուան պէս.
Բայց ցոյց տալու համար բարիքն իմ գրտած՝
Կը պատմեմ թէ ինչեր տեսայ այնտեղ ես:

Ձեմ յիշում թէ ինչպէս մըռայլ ես այնտեղ,
Այնքան էի քննաթաթախ այն պահին,
Երբ շեղուեցի ճանապարհից ես անեղծ:

Բայց երբ հասայ ըստորոտը մի լեռան,
Ուր հատնում էր այն հովիտը չարաշուք,
Որ իմ սիրտը ահաբեկել էր այնքան,

Վեր նայեցի եւ տեսայ որ նա արդէն
Ողողուած էր ճաճանչներով արեւի,
Որ անպատիր ուղեցոյց է լուսեղէն:

Այնժամ մի քիչ անցաւ սոսկումն իմ խորին,
Որով այնպէս համակուել էր սիրտը իմ
Այն տանջալի, անդոհալի գիշերին:

Եւ ինչպէս նա, ով հեւհեւուն ու անձկոտ,
Ծովից դէպի ծովեղերքը դուրս դալով
Նայում է ետ՝ ալիքներին փորձանքոտ,

Այսպէս հոգիս, դեռ անձկարեկ ու սասան,
Դարձաւ ետեւ, նայելով այն անտառին,
Որ մատնում է մարդուն ի սպառ կորստեան:

Երբ քիչ հանգիստ տուի մարմնիս պարտասած,
Ճամբայ ընկայ դէպի բարձունքն ամալի,
Յենուելով միշտ իմ ոտներին պնդացած:

Եւ ահա ճիշտ իմ վերելքի ըսկզբին,
Թեթեւաշարժ ու ժիրաժիր մի յովաղ,
Որ պատած էր պիսակներով երփներփին,

Դէմքս ելաւ եւ չըթողեց բարձրանամ,
Այլ մանաւանդ ճամբաս այնպէս խափանեց,
Որ քանիցըս շուռ եկայ որ ետ դառնամ:

Նախաժամն էր արշալոյսի վաղորդեան,
Եւ արեւն այն աստղերի հետ էր ծագում,
Որոնց հետ էր նախուստ, երբ Սէրն աստուածեան

Շարժում տուեց մարմիններին գեղատես:
Լաւ ժամին ու եղանակին վստահած,
Արդէն այնքան երկիւղ չէի ըզգում ես

Այն գազանից քրմավար ու բժաւոր.
Բայց ես նորից համակուեցի սարսափով,
Երբ հանդիպեց ինձ մի առիւծ ահաւոր:

Սա կարծես թէ իմ վըրայ էր յարձակում
Եւ մըռնչում քաղցից այնպէս կատաղի,
Որ օդն անգամ սարսափով էր համակում:

Եւ նոյն պահին տեսայ էդ գայլ մի վըտիտ,
Որ անյադ ու անկշտում էր երեւում
Եւ շատերին պատճառել էր ցաւ ու վիշտ:

Սա ինձ այնքան պատճառ եղաւ խըռովքի
Քըստըմնելի եւ ահռելի իր տեսքով,
Որ ես արդէն կորցրի յոյսըս վերելքի:

Ժըլատն ինչպէս, որ դիզել է անընդհատ,
Երբ գալիս է ժամանակը կորցնելու,
Տխրում է եւ իրեն ըզգում յոյժ վըհատ,

Այսպէս վըհատ ինձ ըզգացի, յիրաւի,
Երբ գայլը ինձ նորից մըղում էր այնտեղ,
Ուր շողերը չեն թափանցում արեւի:

Մինչ ես դէպի հովիտն էի թաւալում,
Իմ աչքերին ներկայացաւ ինչ-որ այր,
Որի ձայնը թոյլ ու նըւաղ էր թըւում:

Տեսնելով այդ ամայութեան մէջ նըրան,
Ես գոչեցի. «Ողորմի՛ր ու փրկի՛ր ինձ,
Կենդանի մարդ դու լինես, թէ ուրուական»:

Պատասխանեց. «Մարդ չեմ, սակայն եղել եմ.
Ես սերել եմ լոմբարդացի ծնողներից
Եւ ծընուել եմ Մանտովայում անըսեմ:

Ծընուել եմ ուշ, օրօքն Յուլիոս Կեսարի,
Ապրել Հռոմում Օգոստոսի շուքի տակ,
Երբ դեռ կային սուտ աստուածներն ազգերի:

Եղայ պոէտ եւ երգեցի թէ ինչպէս
Անքիսի քաջ, արդար որդին հեռացաւ
Սէգ Տրոյայից, երբ սա այրուեց բոցակէզ:

Բայց դու ինչո՞ւ վայրն ես գընում տանջանքի,
Ինչո՞ւ համար չես բարձրանում լեռն ի վեր,
Որ ըսկիզբն է, պատճառն ամէն բերկրանքի»:

Ես պատասխան տուի դէմքով պատկառուն.
«Դո՞ւ ես Վիրգիլն, դո՞ւ ես աղբիւրն անըսպառ,
Ուրկից երգի գետ է հոսել լայնահուն»:

Օ՛, դու բոլոր պոէտների փառք ու լոյս,
Արժեն սէրն ու տընութիւնը յարատեւ,
Որով երկերդ վերժանեցի խորասոյգ:

Դու ես վարպետս, հեղինակըս պատուական.
Դու ես լոկ նա, որից էլ ես ըստացայ
Գեղոճը, որ պատիւ բերեց ինձ այնքան:

Տես գազանը, որ ճամբաս է խափանում.
Օգնի՛ր ինձ, ո՛վ մեծահռչակ իմաստուն.
Նա իմ բոլոր մարմինը դող է հանում»:

Նա բարբառեց ի տես իմ մեծ երկիւղի.
«Եթէ կ'ուզես պըծնել հովտից այս մըռայլ,
Պէտք է ընտրես բոլորովին այլ ուղի»:

Քեզ նեղացնող այդ գայլ-գազանը դժնեայ,
Հանդիպողին հալածում է չարաչար
Եւ մինչեւ իսկ ըսպանում է անխընայ:



Տանքէ եւ վիրգիլիոս
դժոխքի անդունդներուն մէջ

Նա բընութեամբ այնքան չար է, զազրելի,
Որ ուտում է ինչպէս անյագ գիշատիչ,
Եւ ուտելուց յետոյ քաղցում աւելի:

Նա աշխարհում չարիքներ է գործում չառ
Եւ կը գործի դեռ շարունակ, մինչեւ որ
Քերծէն գայ ու նըրան մեռցնի ճարահատ:

Սա ոչ հողով, ոչ էլ փողով կը սընուի,
Այլ պատիւով, իմաստութեամբ ու սիրով.
Նա Ֆելարի եւ Ֆելարի միջեւ կը ծընուի:

Նա կը փրկի հէգ ու թշուառ իտալիան,
Որի համար զոհ զընացին կարեւէր
Տուռնոն, Նիսոն, Եւրիալն ու Կամիլլան:

Նա կը վանի գայլին ամէն քաղաքից,
Մինչեւ նորից խըրի խորքը Դժոխքի,
Ուրկից զուրս էր եկել մղուած նախանձից:

Արդ ի խնդիր քո փրկութեան ապահով՝
Հետեւի՛ր ինձ, որ քեզ հանեմ այստեղից,
Անցկացնելով յաւերժական կայանով:

Անդ կը լսես անյոյս ճիչեր ցաւազին
Եւ կը տեսնես հին հողիներ յարատանջ,
Որոնք երկրորդ մահ են տենչում անձկազին:

Ապա նըրանց, որ տանջւում են հաճոյքով,
Որովհետեւ յոյս ունեն, որ երբեւէ
Կը բարձրանան երանելի հոգւոց քով:

Իսկ սըրանց մօտ եթէ ելնել փափաքես,
Քեզ կը տանի արժանաւիառ մի հողի,
Որին պիտի հեռանալիս յանձնեմ քեզ:

Զի երկնքում թաղաւորող վեհ Արքան
Ինձ թոյլ չի տայ մտնել այնտեղ, քանի որ
Իր Օրէնքին ծանօթ չեղայ ես այնքան:

Նա ամէն տեղ տէր է, այնտեղ՝ դահակալ.
Նըրա քաղաքն ու դահոյքը այնտեղ են.
Երջանիկ է նա, ով դառնում է ընտրեալ»:

Եւ ես նրան. «Խնդրում եմ քեզ, ո՛վ պոէտ,
Յանուն Աստծու, որին դու չես ճանաչել,
Ազատի՛ր ինձ այս վիճակից չարաղէտ:

Տա՛ր ինձ այնտեղ, որի մասին խօսեցիր,
Որ ես տեսնեմ դարպասը սուրբ Պետրոսի
Եւ նըրանց, որ յար տանջւում են, ասացիր»:

Նա ընթացաւ, ես ետեւից զընացի:

Ք Ա Ի Ա Ր Ա Ն

Ե Ր Պ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Առաջագրանքի եւ կոչ Մուսաներին: - Արուեստի եւ չորս աստղերը: - Քա-
ւարանի պահապան Կատանը: - Խոնարհութեան եւ մաքրագործութեան ա-
րարողութիւն:

Արդ, չընելու համար հանդարտ ջրերերով՝
Առաջաստ է պարզում նաւակն հանճարիս,
Որ ետ թողեց մի ծով այնքան ալեխուով:

Եւ ես հիմա Քաւարանն եմ երգելու,
Ուր մարդկային հոգիներն են մաքրւում
Ու արժանի դառնում երկինք ելնելու:

Աստ թող յառնէ քերթողութիւնը մեռեալ,
Ո՛վ սրբազան ու տիրական Մուսաներ.
Թող Կալիփոպէն հաճի փոքր ինչ վեր կենալ

Ուղեկցելու երգիս ձայնով սրտայոյզ,
Որի հարուածն հէգ Անծեղներն ըզգացին,
Չունենալով ներողութեան ոչ մի յոյս:

Արեւելեան չափիւղայի դոյնն աղուոր
Որ անապակ օդի մէջ էր տարածուել
Մինչեւ պայծառ հորիզոնը հեռաւոր,

Նորից սկըսեց իմ աչքերը հըմայել,
Հենց որ ելայ մըռայլամած օդից դուրս,
Որ իմ հոգին անդհով էր համակել:

Սէր ներշնչող մոլորակը գեղապանծ
Ժպտացնում էր արեւելքը բովանդակ,
Սըքօղելով ընթացակից իր Ձրկանց:

Ես դարձայ աջ եւ նայեցի բեւեռին.
Այնտեղ տեսայ լուսապայծառ չորս աստղեր,
Որ տեսել են միայն մարդիկ առաջին:

Նըրանց ցոլքով երկինքն հըճուում էր կարծես:
Որբացել ես, հիւսիսային կիսագունդ,
Ձի դու նըրանց դիտարկելուց զրկուած ես:

Երբ ես նըրանց դադարեցի նայելուց
Եւ ուղղուեցի դէպի բեւեռն հակադիր,
Որտեղ Սայլը անհետացել էր վաղուց,

Իմ մօտ տեսայ մի ծերունի մենաւոր,
Տեսքից այնքան ակնածութեան արժանի,
Որքան որդին ունենում է հանդէպ հօր:

Նըրա մօրուքն երկար էր ու ալեհեր,
Ինչպէս էին գլխի մազերը, որոնք
Թափուել էին կրծքին հիւսքով զուգահեռ:

Ճաճանչները չորս սրբազան աստղերի
Այնպէս էին պայծառացրել դէմքը, որ
Նա չողում էր ինչպէս արեւը բարի:

«Այդ ո՛վ էք դուք, որ գետնի վեր ելնելով,
Խոյս էք տուել յաւերժական զնդանից. —
Հարցրեց նա մեզ թաւ մօրուքը շարժելով:

Ո՛վ բերեց ձեզ, ո՛վ ուղեկցեց ձեզ այստեղ,
Ձեզ հանելով խորխորատից Դրժոխքի,
Ուր տիրում է յաւէտ խաւարը ահեղ:

Ի՛նչ, փոխուե՞լ են օրէնքները գեհենի,
Կամ երկնքում նոր որոշո՞ւմ է հանուած,
Որ եկել էք այստեղ առանց հրամանի»:

Առաջնորդըս այնժամ բռնեց ինձ ձեռքով,
Եւ ձայնով ու ակնարկներով հասկացրեց,
Որ ծնրադրեմ նըրա առջեւ յարգանքով:

Ապա ասաց. «Ես չեմ եկել ինքնակամ:
Մի կին իջաւ երկնքից ու ինձ խնդրեց,
Որ ես սըրան իմ օգնութիւնը ցոյց տամ:

Բայց եթէ դու կամենում ես ըստանալ
Աւելի լայն տեղեկութիւն մեր մասին,
Ես չեմ կարող քո խնդիրքը զըլանալ:

Սա չի տեսել դեռ իր գիշերը վերջին,
Բայց խօլաբար այնքան նըրան մօտեցաւ,
Որ քիչ մընաց պիտի կորչէր գլխովին:

Ինչպէս ասի, ուղարկուեցի նըրա մօտ,
Որ օգնեմ ու փրկեմ նըրան, եւ հարկ էր
Դըրա համար անցնել ճամբով տաժանոտ:

Ես ցոյց տըլի նըրան մարդկանց դատապարտ,
Արդ ուզում եմ նըրան ցոյց տալ այն հոգւոց,
Որ քաւում են իշխանութեան տակ քո արդ:

Ինչպէս եկանք, այդ ես պատմել չեմ ուզում.
Ինձ աջակցեց մի զօրութիւն գերագոյն,
Եւ ահա ես քեզ եմ տեսնում ու լըսում:

Նըրա գալը դու ընդունիր լաւաւիւմ.
Նա ձգտում է ազատութեան թանկագին,
Որի համար մարդ զոհում է կեանքն անդամ:

Դու այդ գիտես, քանզի մահը հաճոյքով
Ընդունեցիր Ուտիկէում, ուր թաղուած
Մարմինդ մի օր կը շողջողայ ողջ փառքով:

Մենք չենք խախտել օրէնքները անվախճան.
Զի նա ողջ է, իսկ ես ազատ Մինոսից,
Պարունակս էլ այն է, որտեղ քո Մարկիան,

Ազնիւ հոգի, աչքով քեզ է փնտռում դեռ.
Յանուն սիրոյ, որ նա ունի քո հանդէպ,
Բարեհաճիր բաւարարել իղձը մեր:

Թոյլ տուր մտնենք քեզ ենթակայ մարդերում,
Որպէսզի քեզ փառաբանեմ նըրա մօտ,
Եթէ հաճես յիշատակուել այն վայրում»:

Եւ նա ասաց. «Նըր ողջ էի դեռ կեանքում,
Մարկիան այնպէս իմ աչքի լոյսը դարձաւ,
Որ ես նըրան ոչինչ չէի խընայում:

Արդ քանի որ նա այն կողմն է ժանտ գետից,
Է՛լ չի կարող ինձ յուզել այն օրէնքով,
Որ հաստատուեց, երբ ես ելայ այնտեղից:

Բայց եթէ քեզ մի սուրբ կին է ուղարկել,
Է՛լ հարկ չկայ շոյող խօսքեր անելու,
Բաւ է որ դու նըրա կողմից ես եկել:

Արդ գընա՛ եւ գօտեւորիր դու նըրան
Մի կնիւնով, եւ երեսն էլ լաւ լըւա՛,
Որ չըմընայ կեղտի ոչ մի հետք վըրան:

Վայել չէ, որ նա աչքերով մթազնած
Ներկայանայ պաշտօնէին առաջին,
Որը մէկն է էականերից երկնակեաց:

Այս կղզեակը, իր ամերի երկայնքին,
Ուր ծեծում են ալիքները Ովկիանի,
Ունի չամբեր հողի վըրայ սիկային:

Սաղարթաւոր կամ կարծրակուռ ոչ մի բոյս
Այստեղ աճել եւ ուռճանալ չի կարող,
Զի չի թեքուի ալիքներից հողմայոյց:

Դուք այստեղից անկարող էք ետ դառնալ.
Ահա ծագող արեւը ձեզ ցոյց կը տայ,
Թէ ինչ ճամբով պէտք է լեռը բարձրանալ»:

Այս անելով անհետացաւ. եւ ես լուռ
Ոտքի ելայ ու վարպետիս մօտեցայ,
Իմ հայեացքը նըրա վըրայ յառած սուր:

Վարպետս ասաց. «Որդեակ, դու ինձ հետեւիր.
Գընանք այն կողմ, զառիվայրը այդ կողմից
Տանում է դէպ ծովի ամբ ցածրադիր»:

Վաղորդեան ժամն ընկրկում էր արդ ետ ետ
Արշալոյսի առջեւ բացուող, եւ հեռուից
Նըկատեցի ծովածըմանքը վէտ վէտ:

Գընում էինք հարթավայրով մենաւոր,
Ինչպէս նա, ով կորցրած ճամբան գտնելով՝
Հրճւում է եւ իրեն ըզգում բախտաւոր:

Գալով այնտեղ, որտեղ շաղը մանրամաղ
Պայքարում է շողերի հետ արեւի,
Եւ որտեղ նա գոլորշանում է դանդաղ,

Վարպետս իր երկու ձեռքերը բացած՝
Մեղմ տարածեց խոտի վըրայ դալարուն.
Ես, որ նըրա դիտումն էի հասկացած,

Մօտեցրի նըրան այտերս արտօսրոտ.
Նա երեւան հանեց գոյնն իմ բընական,
Որ ծածկել էր Դըժոխքը մութ ու մըրոտ:

Ապա մէկտեղ եկանք ամբողջ,
Ուր ոչ ոք չի կարողացել նաւարկել
Ու ետ դառնալ ալիքներով ամհհի:

Այստեղ նա ինձ գօտեւորեց անդատին:
Բայց, ո՛վ զարմանք, այն խոնարհ բոյսը, որ նա
Քաղեց-պոկեց, հենց նոյն տեղում վերստին

Ընդհուպ բուպաւ մի ուրիշ տունկ եղեգնեայ:

Դ Ր Ա Խ Տ

Ե Ր Գ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Առաջագրանք եւ կոչ: — Տանքի եւ Պէարրիչէի համբարձումը Երկրային դրախտից դէպի երկինք: — Երկնագուդերի ձայնն ու լոյսը: — Տիեզերքի համակարգը:

Փառահեղ լոյսն ամէն չարժման ակունքի
Տարածւում է տիեզերքում եւ շողում
Մի տեղ լըրիւ եւ մի այլ տեղ մասնակի:

Այն երկնում, որ ողողւում է այդ լոյսով,
Եւ եղայ եւ տեսայ բաներ այնպիսի,
Որ չեմ կարող վերապատմել բառերով:

Զի մեր միտքը, երբ իր իղձին է հասնում,
Այնքան շատ է խորասուզւում նրբա մէջ,
Որ յիշելու ունակութիւնն է կորցնում:

Մական ինչ որ ես կարող եմ վերլիշել
Այն սրբազան արքայութեան գանձերից,
Արդ կը լինի երգերիս նիւթը վայել:

Ո՛վ Ապոլլոն, այս երկունքիս մէջ վերջին,
Քո ներշնչմամբ դու ինձ այնքան տողորիր,
Որքան հարկ է, որ ըստանամ քո դափնին:

Յարդ բաւ եղաւ մի գազաթը Պառնասի,
Բայց հիմա ինձ հարկաւոր են երկունն էլ,
Որ մուտք գործեմ ասպարէզը նոր մարզի:

Մըտի՛ր կուրծքս եւ շունչդ ինձ փոխանցիր,
Այն շունչդ ջերմ, որ ունեցար դու այնժամ,
Երբ մըցման մէջ դու Մարսիային յաղթեցիր,

Եթէ դու ինձ, ո՛վ զօրութիւն անսասան,
Այնպէս օգնես, որ կարենամ պատկերել
Թէկուզ ըստուերն արքայութեան սրբազան,

Կը մօտենամ ես քո դափնուն բաղձալի,
Պրտակուելու համար նրբա տերեւով,
Շընորհիւ քեզ եւ իմ նիւթի պանծալի:



Տանքի Պէարրիչէի հետ
Արքայութեան փառքերուն մէջ

Հա՛յր, այդ բոյսից այնքան քիչ են քաղում արդ՝
Մեծարելու համար կայսրի, պոէտի,
— Ի մեծ ամօթ մարդկանց կամքի յանցաւարտ —

Որ անշուշտ դու, աստուածութիւնդ Դելփեան,
Կը հրճուէիր, եթէ մէկը նըկըրտէր
Արժանանալ այդ տերեւին Պենէեան:

Փոքրիկ կայծին հետեւում է մեծ հրդեհ.
Ինձնից յետոյ դուցէ լինեն լաւագոյն
Խնդրարկուններ, որոնց Կիրրան ունկնդրէ:

Ջահն աշխարհի մարդկանց վըրայ է ծագում
Մերթ այս կողմից, մերթ այն, սական այն կողմից՝
Ուր չորս ծիրերն երեք խաչեր են կազմում,

Նա ծագում է աւելի լաւ մի տեսքով
Եւ աւելի լաւ աստղերի բոյլի հետ,
Ու երկիրը կազապարում իր կնքով:

Աստ առաւօտ, անդ երեկոյ էր դարձել,
Եւ քիչ առ քիչ այս կիսադունդը համալ
Պայծառել էր, իսկ այն միւսը խաւարել,

Երբ ես տեսայ իմ տիրուհուն, որ դարձած
Դէպի ձախ կողմ՝ պիչ նայում էր արեւին.
Արծիւն անգամ նըրան այնպէս չէր նայած:

Եւ ինչպէս որ շողը ծագում է շողից
Ու վերըստին բարձրանում է դէպի վեր,
Ինչպէս բազէն, որ թռչում է ետ նորից,

Այսպէս նըրա սեւեռարիւր նայուածքից
Առաջացաւ իմ հայեացքը անսովոր,
Որով արփին ես դիտեցի ներքեւից:

Այն, ինչ երկրում անկարող ենք մենք անել,
Աստ կարող ենք, ի շընորհիւ տեղանքի,
Որ ի վերուստ մարդկանց համար է հաստուել:

Ես այդ լոյսին չըտոկացի շատ երկար.
Բայց տեսայ, որ նա կայծեր էր արձակում,
Ինչպէս երկաթն հանուած բովից թեժ ու վառ:

Օրուայ լոյսը յանկարծ աճեց իմ աչքում,
Ինչպէս եթէ ամենակալ Տէրը մեր
Մի նոր արեւ դըրած լինէր երկնքում:


Պէտքերիչէն աչքերն յառել էր յաւերժ
Երկինքներին. ես էլ նըրան յառեցի
Իմ աչքերը ըզմայլեալ ու այլամերժ:

Նըրա տեսքից գերմարդացայ ես տակաւ,
Գլաւին ինչպէս դարձաւ աստուած ծովային,
Երբ մի տեսակ խոտ համտեսեց ու կերաւ:

Գերմարդանալն անհընար է բացատրել,
Սակայն բաւ է այս օրինակը նըրան,
Ով կարող է այդ իր փորձով հաստատել:

Թէ ես միայն հոգով էի համբառնում,
Դու լոկ դիտես, ո՛վ երկինքը վարող Սէր,
Որ բարձրացրիր ինձ քո ոյժով անհատնում:

Երբ գնդերը, որ հոլովում են յաւէտ,
Իրենց վըրայ կենտրոնացրին ուշքը իմ
Հնչիւններով իրենց մեղմ ու դաշնաւէտ,



Աստուածամայրը
Արքայուքիս փառքերուն մէջ
Իր շտակներով եւ սուրբերով շրջապատուած

Տեսայ երկինքն այնպէս վառուած արեւից,
Որ այդպիսի լայնատարած լիճ երբեք
Չի գոյացել դեռից եւ կամ անձրեւից:

Չայնն այնքան նոր եւ լոյսն այնքան առատ էր,
Որ ուղեցի դըրանց պատճառն իմանալ
Մի մարմաջով, որ իմ մէջ չէր եղել դեռ:

Տիրուհիս, որ միտքըս կարգում էր դիւրաւ,
Գոհացնելու համար իղձըս անձկայրեաց,
Նախքան հարց տալս՝ իր բերանը բաց արաւ

Եւ բարբառեց. «Թիւր կարծիքովդ ինքըդ քեզ
Բըթացնում ես. դու ամէն ինչ կ'իմանաս,
Եթէ քեզնից այդ կարծիքը թօթալես».

Է՛լ երկրում չես, ինչպէս կարծում ես դու դեռ:
Շանթն այնպէս չի գահավիժել վերից վար,
Ինչպէս դու արդ սըլանում ես դէպի վեր»:

Եւ ես նըրա այս խօսքերով կարճառօտ
Ազատուեցի տարակոյսից առաջին,
Բայց ընկայ նոր տարակոյսի մէջ կնճռոտ

Եւ ասացի. «Մի զարմանքից հանգչեցի,
Բայց հիմա էլ զարմանում եմ թէ ինչպէս
Վեր եմ թռչում միջով թեթեւ տարերքի»:

Եւ այնժամ նա հառաչանքով խորազգած
Աչքերն ուղղեց դէպի ինձ այն նայուածքով,
Որով մայրն է նայում որդուն ցընորած,

Եւ բարբառեց. «Արարածնե՛րը համայն
Իրենց միջեւ ունեն մի կարգ ներդաշնակ,
Որ տիեզերքն Աստծուն զարձնում է նրման»:

Վեհ էակներն այդ կարգի մէջ ըստեղծուած
Տեսնում են ոյժն Յաւերժական էակի,
Որի համար է այն կարգը հաստատուած:

Այդ կարգի մէջ գոյակները ամենայն
Հակում ունեն ինչ որ բանի ձգտելու,
Իրենց տրուած աստիճանի համաձայն.

Եւ լողում են տիեզերքի մեծ ծովով
Դէպի տարբեր հանգրուաններ՝ խթանուած
Իրենց վարող մասնայատուկ բընազգով:

Դա է տանում հուրը դէպի գունդը վառ,
Դա է վարում անբանական կենդանուն,
Դա է պահում երկրի զանգուածը ըստուար:

Սակայն անբան գոյակները չեն միայն,
Որ ձգտում են դէպի որոշ նըպատակ,
Այլեւ նըրանք, որ միտք ունեն բանական:

Այս բոլորի տընօրինողն իմաստուն
Իր լոյսով է պայծառացնում երկինքն այն,
Որի տակ է չըջում երկինքն արագուն:

Եւ հենց այնտեղ, ինչպէս վերջին կայանին,
Մեզ տանում է ոյժն այն հակման, որ ամէն
Արարածի ուղղում է իր վախճանին:

Սակայն ինչպէս արուեստի գործն իր ձեւով,
Յղացուածից մերթ տարբեր է դուրս գալիս,
Նըրա նիւթը վատ լինելու պատճառով,

Այսպէս էակն իրեն նշուած ընթացքից
Մերթ չեղում է, իր այն ոյժի պատճառով,
Որ կարող է եւ խոտորուել ճիշտ ճամբից:

Եւ ինչպէս մերթ հուրն ամպերի խորքերից,
Յած է իջնում, այսպէս խոյանքն առաջին,
Յածրանում է, չեղում ավտիր հաճոյքից:

Մի՛ զարմանար, որ երկինք ես բարձրանում,
Այնպէս ինչպէս չես զարմանար տեսնելով
Մի գետակ, որ սարից հովիտ է իջնում:

Զարմանալին այն կը լինէր քո դէպքում,
Որ դու, անխոչ, դեռ ներքեւում մընայիր,
Ինչպէս եթէ բոցը մընար իր տեղում»:

Եւ նա նորից երկինք ուղղեց հայեացքն իր:

Երեւան, 1965

Բնագրէն քարգմանեց
ԱՐԲՈՒՆ ՏԱՅԵԱՆ

